

ՀՐԱՏԱՊ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՈՒՄ ԵՎ ԿՈՆԿՐԵՏ

ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐ ՄԱՅԱԿՈՎԱԿԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ

05.08.2014

Արժանի տարածաշրջանի Մայակովսկի համայնքում առկա հիմնախնդիրներին տեղում ծանոթանալու, ինչպես նաև համայնքային զարգացման հեռանկարային ծրագրերը քննարկելու նպատակով նշված գյուղական համայնք է այցելել ՀՀ Կոտայքի մարզպետ Ա. Հարությունյանը:

Մայակովսկի համայնքում Կոտայքի մարզպետին ներկայացվել են ծաղիկների աճեցմամբ զբաղվող գյուղացիական տնտեսությունների աշխատանքները, ինչպես նաև այդ ուղղությամբ համայնքի բնակիչների կողմից ցուցաբերվող հետաքրքրությունները:

Կոտայքի մարզպետ Ա. Հարությունյանը համայնքի ղեկավար Վ. Բարսեղյանի ուղեկցությամբ այցելել է նաև <<Մայակովսկու ԱՎՊԿ>> ՓԲԸ: Կենտրոնի պատասխանատուներին Կոտայքի մարզպետը հանձնարարել է օրեր առաջ պաշտոնապես բացված Նոր մասնաշենքում լիարժեքորեն կազմակերպել համայնքի բնակչության բուժսպասարկումը՝ ապահովելով առողջապահական հաստատության գործառույթների ամբողջական իրականացումը:

Հանձնարարվել է նաև համապատասխան քայլեր ձեռնարկել բարերարներ Ա. Խաչատրյանի կողմից ներդրված 21.5 մլն դրամի չափով շինարարական աշխատանքների և Գ. Ծառուկյանի կողմից ներդրված շուրջ 3 մլն դրամի չափով բուժարքավորումների ու շտապ բուժօգնության մեքենայի նվիրատվությունները կենտրոնի հաշվեկշռում արտացոլելու ուղղությամբ:

Կոտայքի մարզպետն այս մասով կոնկրետ հանձնարարություններ է տվել նաև մարզպետարանի աշխատակազմի համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներին՝ ընդգծելով հիշյալ բուժօգնության արդյունավետ գործունեության ապահովման նկատմամբ պատշաճ հսկողություն սահմանելու անհրաժեշտությունը:

Ըստ հիշյալ հանձնարարականների սահմանվել են նաև առողջության առաջնային պահպանման կենտրոնի կողմից հարակից այլ համայնքների բնակիչներին ևս բուժսպասարկման հարցում աջակցություն ցուցաբերելու ընթացակարգերը՝ կիրառելով ինչպես կենտրոնին պատկանող բուժարքավորումներն, այնպես էլ սանիտարական տրանսպորտը, որը սահմանված ժամանակացույցի համաձայն սպասարկելու է նաև Արամուս համայնքը:

Գյուղի միջնակարգ դպրոցում Կոտայքի մարզպետ Ա. Հարությունյանն անդրադարձ է կատարել կրթության որակին և ներդպրոցական աշխատանքների կազմակերպման արդյունավետության բարձրացման անհրաժեշտություններին:

Մայակովսկու համայնքային կենտրոնում քննարկվել են համայնքի զարգացման հիմնական առաջնահերթությունները, այդ ուղղությամբ նախանշվել մի շարք ծրագրային մոտեցումներ: